ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 7

«03» 02 2020 թ. ք. Երևան

ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔԵՐԻ ԵՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի Ն 73 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով արտակարգ դեպքերի և հանցագործությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն հաղորդումներ ներկայացնելու միասնական կարգ սահմանելու անհրաժեշտությունը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Մարզերի, Երևան քաղաք վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին՝

1) Անհապաղ, հեռախոսով կամ կապի այլ միջոցներով, ինչպես նաև քրեական գործ հարուցելուց հետո ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում նաև գրավոր հաղորդմամբ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին կամ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի ոլորտը համակարգող տեղակալին և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության համապատասխան վարչության պետին կամ Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության համապատասխան բաժնի պետին իրազեկել հետևյալ արտակարգ դեպքերի և հանցագործությունների մասին՝

ա. մարդկային զոհեր, զանգվածային հիվանդություններ, համաճարակներ և այլ ծանր հետևանքներ առաջացրած էկոլոգիական հանցագործություններ.

բ. սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 299-307-րդ հոդվածներ).

գ. երկաթուղային, օդային կամ ավտոմոբիլային տրանսպորտում մարդկային զոհերով կամ այլ ծանր հետևանքներով ուղեկցված աղետներ և վթարներ.

դ երկաթուղային, օդային կամ ավտոմոբիլային տրանսպորտում գործադուլներ, որոնք հանգեցրել են օդանավակայանների կամ տրանսպորտային մայրուղիների առանձին հատվածների գործունեության դադարեցմանը.

ե. օդանավերի, գնացքների և մարտական տեխնիկայի առևանգում, օդանավակայանների և միջպետական ու հանրապետական նշանակության մայրուղիների ապօրինի շրջափակում.

զ. ընտրությունների և հանրաքվեների ընթացքում արձանագրված հանցագործություններ.

է. հասարակական կարգի խախտման և այլ ծանր հետևանքներ առաջացրած չարտոնված հանրահավաքներ ու ցույցեր.

ը. հրազեն, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ սարքեր, մարտական տեխնիկա հափշտակելու նպատակով կատարված (այդ թվում՝ զինվորական ստորաբաժանումների վրա) հարձակումներ.

թ. հասարակական անվտանգության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր, ինչպես նաև մահվան կամ ծանր հետևանքների հանգեցրած հանցագործություններ.

ժ. ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանքի հողի վրա կատարված հանցագործություններ.

ժա. դատախազության աշխատակիցների նկատմամբ կատարված հանցագործություններ, ինչպես նաև դատախազությունների շենքերի և այլ գույքի նկատմամբ կատարված հանցավոր ոտնձգություններ.

ժբ. դատախազության աշխատակիցներին տրված զենքի կորստյան կամ հափշտակության փաստեր.

ժգ. դատախազության աշխատակիցներին պատահած դժբախտ պատահարներ, որոնք հանգեցրել են նրանց մահվան, կամ առողջությանը ծանր վնաս հասցնելուն.

ժդ. իրավապահ մարմինների աշխատակիցների, դատավորների, պատգամավորների, օրենսդիր և գործադիր իշխանության բարձրագույն մարմինների ղեկավարների, զինծառայողների բարձր հրամանատարական սպայակազմի ներկայացուցիչների, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայողների և փաստաբանների նկատմամբ կատարված հարձակումներ, որոնք հանգեցրել են նշված անձանց մահվան, առողջությանը ծանր վնաս հասցնելուն, առևանգմանը, անհետ կորելուն կամ ինքնասպանությանը.

ժե. պատգամավորների, դատավորների, դատախազների, քննիչների, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայողների, ոստիկանության, ազգային անվտանգության, մաքսային և հարկային համակարգերի, ինչպես նաև հետաքննության այլ մարմինների աշխատակիցների ու փաստաբանների կողմից կատարված հանցագործություններ.

ժզ. օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ կամ նրանց կողմից կատարված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ (բացառությամբ փախստականի կարգավիճակ կամ ապաստան ստացած, կամ նման խնդրանքով Հայաստանի Հանրապետության իրավասու մարմին դիմած անձանց).

ժէ. միջազգային պաշտպանությունից օգտվող օտարերկրյա պետության ներկայացուցչի կամ միջազգային կազմակերպության աշխատակցի կամ նրա հետ բնակվող ընտանիքի անդամների, ինչպես նաև միջազգային պաշտպանությունից օգտվող անձանց ծառայողական կամ բնակելի շենքերի կամ տրանսպորտային միջոցների վրա հարձակվելու դեպքեր (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 396-րդ հոդված).

ժը. օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցիչների և դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող այլ անձանց կողմից կատարված հանցագործություններ.

ժթ. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 445-րդ հոդվածով նախատեսված՝ դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձանց ձերբակալում.

ի. հասարակական բարձր վտանգավորություն ներկայացնող այլ հանցագործություններ և հասարակական հնչեղություն ունեցող այլ պատահարներ:

2) Մեկօրյա ժամկետում գրավոր հաղորդմամբ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետին՝ իրազեկել Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա քաղաքացիների կողմից կատարված հանցագործությունների դեպքում վերջիններիս արգելանքի վերցնելու դեպքերի մասին:

3) Անհապաղ, հեռախոսով կամ կապի այլ միջոցներով, ինչպես նաև ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում նաև գրավոր հաղորդմամբ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետին իրազեկել սպանության, սպանության նախապատրաստության և փորձի դեպքերի առթիվ քրեական գործ հարուցելու, այդ դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերով վարույթներ կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, կասեցված վարույթներ վերսկսելու, բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ հարուցելու, նշված դեպքերի կապակցությամբ անձանց որպես մեղադրյալ ներգրավելու, այդ դեպքերի կապակցությամբ մեղադրվող անձանց մեղադրանքը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի այլ հոդվածներով փոփոխելու, դատարան ուղարկված քրեական գործերով անձանց արդարացնելու դեպքերի վերաբերյալ:

4) Նշված արտակարգ բնույթի դեպքերից բացի՝ քրեական գործի հարուցման պահից երեք օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին կամ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի ոլորտը համակարգող տեղակալին հաղորդումներ ներկայացնել նաև.

ա. բանկերի, ձեռնարկությունների, հիմնարկների և տնտեսվարող այլ սուբյեկտների վրա կատարված հարձակումների մասին.

բ. կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեպքերի մասին (ըստ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 19.01.2019թ. N 3 հրամանով հաստատված ցանկի).

գ. խոշոր չափերի հարկերը, տուրքերը կամ այլ պարտադիր վճարումները չվճարելու մասին (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 205-րդ հոդված).

դ. հետախուզման մեջ գտնվող անձի կողմից ծանր և առանձնապես ծանր հանցագործություն կատարելու մասին.

ե. թաքցված ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերի բացահայտման մասին:

5) Անհապաղ, հեռախոսով կամ կապի այլ միջոցներով, ինչպես նաև ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում նաև գրավոր հաղորդմամբ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության համապատասխան վարչության պետին կամ Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության համապատասխան բաժնի պետին իրազեկել դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու և ավազակության դեպքերի մասին:

6) Հաղորդումներում նշել այն ուղարկելու պահին հանցագործության մասին հայտնի բոլոր հանգամանքների (հանցագործությունը կատարած անձանց, հետևանքների, շարժառիթների, պատճառած վնասի, ձերբակալված կամ կալանավորված անձանց, իրեղեն ապացույցների, տուժողների) մասին:

7) Հաղորդումները ստորագրած համապատասխան դատախազները անձնական պատասխանատվություն են կրում հաղորդման լրիվության, հավաստիության և ժամանակին ներկայացման համար:

8) Ուղարկված հաղորդումներում նշված քրեական գործերով վերջնական որոշում կայացնելուց հետո՝ 3-օրյա ժամկետում, սպառիչ հաղորդում ներկայացնել քննության արդյունքների մասին, իսկ դատական քննության ավարտից հետո՝ դրա արդյունքների մասին:

2. **Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունների պետերին՝** սույն հրամանի 1-ին կետի 3-րդ ենթակետով նախատեսված դեպքերի վերաբերյալ համապատասխան որոշումները կամ դատական ակտերը կայացնելու պահից մեկ օրվա ընթացքում այդ մասին տեղեկություններ տրամադրել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանը:

3. **Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին՝** ըստ համակարգման բնագավառների՝ ապահովել վերահսկողությունը սույն հրամանի պահանջների կատարման նկատմամբ: Կազմակերպել ստացված հաղորդումների ամփոփման և հսկողական միջոցառումների իրականացման աշխատանքները:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի դեկտեմբերի 5-ի՝ «Արտակարգ դեպքերի, հանցագործությունների և այլ պարտադիր տեղեկատվության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն հատուկ հաղորդումներ ներկայացնելու կարգի մասին» N 73 հրամանը:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

6. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

7. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ